

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԲՋՆԻԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՂԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՐՈՒՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԵՒՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Ամենակալին Աստուծո ողորմությամբ վերաշինվեցավ հնադարյան Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցին, մեկը մեր նվիրական սրբավայրերեն և ճարտարապետական հոչակյալ կոթողներեն:

Մեր երկիրը՝ Հայաստան, պատմական վանքերու, եկեղեցիներու և խաչքարերու սրբացած աշխարհ մըն է: Եվ այդ աշխարհին մեջ Բջնիի Ս. Աստվածածինը՝ համբավյալ սրբավայր մը և քարանյուս գոհար մը՝ մշակութային փառավոր անցյալով:

Մեր ալեկոծ պատմության կատարներուն վրայեն, մինչև ե դար, մինչև հայոց հաղթող սպարապետ Վահան Մամիկոնյանի օրերը պետք է բարձրանալ, գտնելու համար հիմքերը՝ Արարատի, պատմական Նիգ գավառի, Հրազդան գետի ափերուն վրա հաստատված Բջնի գյուղին և իր սրբազան քարերուն: Պատմական այդ գավառին մեջ է, որ ավելի ուշ, ժ դարուն, Պահլավունյաց տոհմի պայազատները հայտնի են դարձած իրենց շինարարությամբ և հայրենանվեր արիասիրտ գործերով ու նաև իրենց կրթական և գիտական գործունեությամբ: Այստեղ է որ մեծանուշակ իմաստասեր և հայոց իշխանաց իշխան Գրիգոր Մագիստրոս, 1031 թվականին, Պետրոս Գետադարձ կաթողիկոսի օրով, հին աղոթարանին հիմքերուն վրա կառուցած է Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցին, որ նշանավոր եղած է «յոլովութեամբ վանորէից և ոստանի Պահլաւունեաց»:

Իբրև հոգևոր իմացական լուսաւորութեան մեծ կեդրոններեն մեկը, այնտեղ մշակված, ծաղկած և աչքի լույսի պես պահպանված են մեր հոգևոր մշակույթի բանկագին գանձերը՝ մատենագրություն, գիտություն և մանրանկարչություն: Այսպես է որ Բջնին իր պատվավոր տեղը կգրավէ մեր մշակույթի պատմության մեջ Տարևի, Սանահնի, Հաղբատի, Գլաձորի, Գետիկի և այլ նշանավոր վանքերու կողքին:

Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցին դարերու ընթացքին ենթարկված է հանախ ավերածություններու: Բայց ամեն ավերումե հետո վերստին կյանք է առած և վերաշինված բարեպաշտ նվիրատուներու ձեռքերով: 1204 թվականին Զաքարե և Իվանե առաքինի իշխանները, 1358-ին՝ Արաբեկ Ամիր Զազա, 1631-ին՝ Մովսես Տարևացի կաթողիկոսի օրով՝ ջուղայեցի խոջա Պետրոս և ապա ուրիշ նվիրատուներ իրենց առատաձեռն նվերներով հիմնական վերանորոգումներ կատարած են Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցիին վրա, կանգուն և պայծառ պահելով այս պատմական սքանչելի կոթողը, զոր հիացումով կնիշե գաղղիացի երեելի ճանապարհորդ Շարդեն 1673 թվականին:

Մեր օրերուն ալ, «յուսովն անմահին Աստուծոյ», անա վերանորոգվեցավ պատմական այս սուրբ եղեկեցին՝ սրտաբուխ նվերներովը լոնդոնաբնակ հայ հավատացյալ ժողովուրդին, նախաձեռնությամբ Լոնդոնի հայ համայնքի վարչության և մանավանդ անձնվեր աշխատանքովը աստվածասեր Տիկնանց հանձնախումբին, որուն գլուխը կանգնած են առաքինազարդ տիկիններ Հայկունի Ապանյան և Աստղիկ Քյուրքճեան: Հավատացյալ հայ ժողովուրդը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը երախտագիտությամբ պիտի հիշեն զանոնք միշտ:

Մեր պատմական յանքերու և եկեղեցիներու վերանորոգությունը Մեր հոգիի ամենախոր իղձն է: Մեր սրտի բովանդակ ջերմությամբ կօրհնենք բոլոր այն բարի ձեռքերը, որոնք կուգան Մեզ օգնելու այս նվիրական ծրագրի իրագործման համբուն վրա:

Թող միշտ կանգուն, շեն ու պայծառ մնան մեր պատմական բոլոր սրբավայրերը, և թող այնտեղեն միշտ լույս և երկնային շնորհներ տարածվին մեր Աշխարհին և մեր ժողովուրդի բոլոր զավակներուն վրա: Թող հայ ժողովուրդը, մանավանդ ի սիյոնս աշխարհի ցրված Մեր զավակները, անսասան մնան իրենց սուրբ հավատքի վեմին վրա և հավատարիմ՝ իրենց Մայր Հողին, իրենց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և իրենց հայրենի բոլոր ժառանգություններուն:

Հայրական ողջո՛ւյն և հայրապետական օրհնությո՛ւն Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցիի նորոգության լոնդոնաբնակ բոլոր նվիրատուներուն, համայնքի վարչության և Տիկնանց հանձնախումբին:

Թող Տերը վարձանատույց ըլլա անոնց աստվածահաճո և բարի գործերուն և պահե զանոնք խաչառողջ ու երջանիկ ի խաղաղության, ամեն:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 26-ն յունիսի
1958 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԷ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի: